ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«___» հունիսի 2011թ. N -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը՝ Արցախյան պատերազմի մասնակից, ազատամարտիկ, 2-րդ խմբի զինվորական հաշմանդամ, բազմանդամ ընտանիքի հայր Գագիկ Ռաֆիկի Հովհաննիսյանին Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին և ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 28-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան քաղաքի սեփականություն համարվող Երևանի Քանաքեռ 14-րդ փողոցի հ.38 շենքի 8-րդ հարկի հ.38 մեկսենյականոց և հ.39 երեքսենյականոց բնակարանները /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 03.09.2009թ. հ.2584303 վկայական/ անհատույց օտարել Գագիկ Ռաֆիկի Հովհաննիսյանին /անձնագիր՝ AG0401616, տրված 21.01.2005թ. 012-ի կողմից/։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արցախյան պատերազմի մասնակից, 1993-94 թվականներին Սերոբ Աղբյուր և Արաբո ջոկատներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազատագրմանը մասնակցած, 2-րդ խմբի զինվորական հաշմանդամ, 11 երեխաների հայր Գագիկ Հովհաննիսյանը Երևան քաղաքում որևէ բնակելի տարածության նկատմամբ չունի սեփականության իրավունք, իր բազմանդամ ընտանիքով բնակվում է վարձակալած փոքր բնակարանում։

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի N604-Ն որոշմամբ Երևան քաղաքի վարչական տարածքում բազմաբնակարան բնակելի շենքերի չսեփականաշնորհված բնակարանները համարվել են Երևան քաղաքի սեփականությունը։ Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N 55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետի՝ գույքը կարող է տրամադրվել անհատույց օգտագործման կամ անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ։

Հաշվի առնելով վերը շարադրվածը և Գագիկ Հովհաննիսյանի՝ արցախյան պատերազմում իր ունեցած անգնահատելի ավանդը՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ՝ Գագիկ Հովհաննիսյանին բնակարաններ հատկացնելու մասին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականությունը համարվող բնակարանները անհատույց օտարելու մասին» որոշման ընդունման առնչությամբ առաջանում է «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները անհատույց օտարելու մասին» Երևանի քաղաքապետի որոշում կայացնելու անհրաժեշտություն։

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականությունը համարվող բնակարանները անհատույց օտարելու մասին» որոշման ընդունման առնչությամբ Երևան համայնքի բյուջեում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ